

**ԴԱՍԸՆԹԱՑ «ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԵՏ ԿԱԴՎԱԾ ՊԱՏԻԺՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՆՎԱԶԵՑՈՒՄԸ՝ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՁԱՅՆ» ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ**

10.02.2014 14:07



**Հարգելի գործընկերներ**

Տեղեկացնում ենք, որ 2014թ. փետրվարի 24-ից 25-ը և 26-ից 27-ը Աղվերանում Եվրոպայի խորհրդի հայաստանյան գրասենյակի կողմից Նորվեգիայի կառավարության ֆինանսավորմամբ կազմակերպվելու է «Ազատությունից զրկելու հետ կապված պատիժների կիրառման նվազեցումը՝ Եվրոպական ստանդարտների համաձայն» ծրագրի շրջանակներում դասընթաց, որին մասնակցելու են նաև դատախազները և դատավորները:

Յուրաքանչյուր խումբ կազմված է 8 փաստաբանից, մեկ խմբի համար դասընթացը կազմակերպվելու է ս.թ. փետրվարի 26-27-ը, իսկ մյուս երկուսի համար ս.թ. փետրվարի 24-25-ը:

Տեղափոխման և կեցության հետ կապված բոլոր ծախսերը հոգալու է Եվրոպայի խորհուրդը:

Հ.Գ. Ընդհանուր 24 տեղ է հատկացված ՀՀ փաստաբանների պալատին: ՀՀ փաստաբանների պալատն առնվազն 8 տեղը սահմանում է մարզային փաստաբանների համար:

Գրանցվելու համար խնդրում ենք էլեկտրոնային նամակ ուղարկել [senioradviser@advocates.am](mailto:senioradviser@advocates.am), ՀՀ փաստաբանների պալատի նախագահի գլխավոր խորհրդական Մանե Կարապետյանին: Էլեկտրոնային նամակի մեջ խնդրում ենք նշել նաև Ձեզ համար անհրաժեշտ օրը: Հարցերի համար կարող եք զանգահարել ՀՀ փաստաբանների պալատ 010 56 07 76 (114) հեռախոսահամարով: